լիպ փաշայի տուն. Անոնք, որք յաջողեցան փախչել, գիմեցին այդ տունը. Դալիպ փաշայն այնչափ բարի գտնուեցաւ, որ իր դռները բանալով զանոնք սիրով ընդունելէ յետոյ, մինչև իսկ ի Քաղաքամէջ ապաստանող իր քանի մ' դրացիներն ալ յատուկ հրաւիրակներով իր տունը բերել տուաւ և զանոնք —65 անձ— հիւրընկալեց և կերակրեց մինչև կիւրակի օրն. Իսկ այնուհետև աշխարհի մէջը ցարդ նմանը չը տեսնուած վայրագ գազանութեամբ խուժանի ձեռքը տալով՝ խժդժական մահուամբ սպանել տուաւ. Վերահաս վտանգը նախազգալով խեղճերէն քանիներն կնոջ հագուստով ծպտուած էին. գահիճները մտան կիներու մէջը և ծպտեալներն ալ գտնելով սպաննեցին. Յիշեալ 19 անձերէն ազատուեցան միայն 15 տարեկան տղայ մը, որ երկյարկ շէնքի մ' տանիքէն զինք վար ձգելով անվնաս մնաց, և երկու հայեր ալ, որք 2 օր Դալիպ փաշայի ճեմեշի ախանին մէջը պահուեցան. Սպանելոց մէջը կը գտնուէր նաև Դալիպ փաշայի ամենամտերիմ բարեկամներէն վերաքննիչ պատժական ատենի անդամ Հայրապետ Խանճեան և նորա եղբօր որդի Նշան Խանճեան. Ասոնց, ինչպէս նաև շատերու, հագուստներուն ափսոսալով, մերկացուցած և ապա սպաննած են. Դալիպ փաշայի օրինակին պէս վարուեցան նաև ուրիշ քանի մ' Թիւրքեր ալ, թէև քանիներ ալ վեհանձնաբար տուներնին բացին իրենց ապաստանող հայերու առաջն և օրերով պահելէ յետոյ պէտք եղած տեղերը վերադարձուցին անվտանգ. Քաղաքացի փախչողներէն շատեր ալ արուեստական աղբերց հորերու և ականներու մէջը պահուեցան քանի մ' օրերով և ոմանք ալ օտարերկրեայ նկուղներու, ծխնելոյզներու, ճեմեշներու և այլնի մէջ.

Պատահած մարդիկ սպաննելէ յետոյ, խուժանը, որոց կը հետևէին նաև մահմեդական և գնչուկիներն և մանուկներն, կողոպտեցին ամէն ինչ՝ որ կը գտնուէր տուներու մէջն, անկողին, հանդերձ, կարասիք, ուտեստ, անասուն, դրամ և ամէն տեսակ հարստութիւն. իսկ այնուհետև քարիւղ սրսկեցին ամէն նշանաւոր երկյարկ և եռայարկ տուներու վրայ և հրկիզեցին. Իսկ շատ մը կիներ և մանկամարդ օրիորդներ ալ բռնաբար և գազանաբար Ակեցին.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Օրհնութեան յանուն պ. Գրիգորի Ջանշիեան ի Մոսկուա. Թ. 1312.

— Ցանուն Տ. Գարեգին վարդապետի, որով արձակի Տ. Պետրոս քահանայն Տ. Յովհաննիսեան ի պաշտօնէ թեմական տեսչութեան եկեղ. ծխ. դպրոցաց վիճակին Արցախու ի 1 հոկտեմբերի տարւոյս. Թ. 1334.

— Ցանուն Փոխանորդին կարուց Տ. Եղիշէ վարդապետի, որով շնորհի նմա իրաւունս բանալ գիւղական երկսեռ դպրոցս յանուն ս. Նշան եկեղեցւոյ քաղաքին. Թ. 1356.

— Ցանուն վերատեսչի գործարանին Ագիլխանովի պ. Սարգսի Ցարութիւնեան. Թ. 1378.

— Ցանուն Տ. Արսէն վարդապետի Վեհունեայ, որով կարգի Հովիւ հայոց որք ի Բուլղարիա. Թ. 1379.

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի վասն գնելոյ արժէթուղթս ի գին երկու հազար րուբլեաց նուիրելոց ի Տիկին Մարգարտէ Ղալախանեցւոյ վասն պահելոյ որդեգիր մի ի Ճեմարանին յանուն հանգ. ամուսնոյ նորին. Թ. 1398.

— Ցանուն Տ. Արսէն աւագ քահանայի Մեծ Ղարաքիլիսայ գեղջ Փամբակայ վասն գաղթականաց. Թ. 1400.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ՓՐԿԱՐԱՐ Լուսաւորութիւնը . . Կ. Վ. . 441
2. Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնը Աղուանից հետ ըստ Վրթանէս քերթողի գրութեան Կ. Վ. 445
3. Համիսլամականութիւնը . . . . . . 447
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . 451

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

5. ՄԱՅՐՍ . . . Յ. Յովհաննիսեան . 456
6. Պարթևները Պարսկաստանում . Ն. Ք. 456
7. Մատենախօսութիւն . . . . . . 488
8. Մի նկատողութիւն . . . . Կ. Վ. . 459

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

9. Ծաղիկները խնամք դպրոցներում Ս. Մ. . 460
10. ՄԱՆՐԱՎՈՐՔ . . . . . . 462

ԱԶԴԱՅԻՆ

10. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . 463
Մայր Աթոռ. . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ.
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: